ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 2-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն: Բանավոր պաշտպանության էին ներկայացվել Մայր Աթոռի միաբաններ Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանի «Խրիմյան Հայրիկ» և Տ. Զոհրաբ աբեղա Կոստանյանի «Հովհաննու Ժ 22-39 տողերը. հայրաբանական հետազոտություն և քննական ուսումնասիրություն» աշխատանքները:

Քննիչ հանձնաժողովը, նախագահությամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի և մասնակցությամբ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի ու Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, քննության առավ ներկայացված ատենախոսությունները և բանավոր պաշտպանությունից հետո փվեց իր դրական գնահատականը: Երկու աշխատանքներն էլ արժանացան հանձնաժողովի հավանությանը:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, տեղի ունեցավ նորընծա վարդապետների վարդապետական աստիճանի փվչության արարողությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ